

ՀԱՅԱՍՏԱՆ- “Բնական աղետներին նվիրված երիտասարդական համաժողով” (NDYS) ծրագիր

Մենք ապրում ենք մի երկրում, ուր բնածին աղետները շատ հաճախ են հանդիպում: Ահա թե ինչու էր Ճապոնիայի հեռահաղորդակցման և կրթամշակութային ծրագրի կողմից (JEARN, iEARN կազմակերպության Ճապոնիայի մասնաճյուղը) կազմակերպված բնական աղետներին նվիրված ծրագիրը (<http://ndys.jearn.jp/eng.html>) այդքան կարևոր մեր երիտասարդ սերնդի համար: Միջազգային ծրագրի նպատակն էր ամբողջ աշխարհում բարձրացնել ընտանիքների, դպրոցների և համայնքների տեղեկացվածությունը բնածին աղետների պատճառների և հետևանքների մասին: Ծրագրի ավարտին աշակերտները որակավորվեցին որպես NDYS դեսպաններ, որոնք մարդկանց կներկայացնեն աղետներին պատրաստված լինելու կարևորությունը և կկիսեն իրենց գիտելիքները աղետների կառավարման ոլորտում: Ծրագրի ընթացքում աշակերտները սովորեցին տեղի ունեցած աղետների և իրենց համայնքներում գործածվող աղետների ղեկավարման մեթոդների, աղետների առաջ գալու խնդիրների, նվազեցման ու պատրաստվածության մասին: Արդյունքում՝ աշակերտների միացյալ ուժերով կուտակված ինֆորմացիան հավաքագրվեց ինտերնետային կայքում և կառուցվեց դպրոցների աղետային անվտանգության քարտեզներ: Յուրաքանչյուր դպրոցի քարտեզ միացվեց համընդհանուր ապահովության քարտեզին, որի միջոցով աշակերտները կսովորեն հաղթահարել անսպասելի աղետները, ուր էլ որ լինեն. <http://ndys.jearn.jp/gsmmap/top.htm>.

Ծրագիրը սկսվել է 2 տարի առաջ: Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին ավելի քան 70 երկրներից աշակերտների նոր խմբեր են միանում Միջազգային ընտանիքին՝ սովորելու բնածին աղետների պատճառների և արդյունքների մասին, որպեսզի ավելի լավ պատրաստված լինեն վաղվա օրվան: ՓՀ-ի ներկայացուցիչ, ինչպես նաև ծրագրի միջազգային կարգավորիչ Նունիկ Նահապետյանի ղեկավարմամբ և խորհրդատվությամբ հայ աշակերտները նույնպես հնարավորություն ստացան միանալ վիրտուալ դասարանին:

2004-2005 ուսումնական տարվա ընթացքում մասնակիցներն ընտրվեցին Լոռի և Շիրակ մարզերից, քանի որ այդ մարզերը բոլորից շատ էին տուժել Հայաստանի 1988 թվականի երկրաշարժից: 6 ամիս տևող առցանց քննարկումներից հետո Հայաստանի երիտասարդական պատվիրակությունը միջոցառումները ամփոփեց Ճապոնիայի Հյուզո քաղաքում տեղի ունեցած երիտասարդական գագաթաժողովում: Հավելյալ տեղեկության համար տե՛ս հետևյալ ինտերնետային կայքը.

<http://www.ascp.am/en/news.html?l=en&set=all&id=262&type=1>

Այս՝ 2005-2006 ուսումնական տարում, ծրագրին միացան Արարատ և Վայոց Ձոր մարզերի 4 դպրոցներ (Արարատի մարզի Կանաչուտի, Վերին Դվինի, Նոր Խարբերդի և Վայոց Ձորի Եղեգնաձորի թիվ 3 միջնակարգ դպրոցները): Ավելի քան 80 ուսուցիչներ, 800 աշակերտներ և 550 համայնքի անդամներ մասնակից եղան այս տեղեկատվական միջոցառումների շարքին: Ամփոփիչ միջոցառման ժամանակ մասնակիցները իրենց ունկնդիրներին ներկայացրին մի քանի ամիսների տքնաջան աշխատանքի արդյունքը, հաջողություններն ու դժվարությունները, որոնց նրանք հանդիպել էին ծրագրի իրականացման ընթացքում:

Ներկաները ծանոթացան որոշ բնածին աղետների հետ, որոնք տեղի են ունենում ամբողջ աշխարհում և որոնք բնորոշ են Հայաստանին, սովորեցին պատճառների, նախանշանների, կանխման միջոցների և դրանց հաղթահարելու ուղիների մասին:

“Այս ծրագիրը բոլորիս համար հանդիսացավ մի նոր տեղեկատվական և կրթական միջոց: Ծրագրի իրականացման ամիսների ընթացքում աշակերտները ավելի շատ տեղեկություն և գիտելիքներ ստացան բնական աղետների մասին, քան կստանային մեկ կամ երկու ուսումնական տարվա ընթացքում”, - հայտնեց իր կարծիքը Վայոց Ձոր մարզի մարզային ծրագրային կոորդինատոր Հասմիկ Մարգարյանը, որը պատասխանատու էր ծրագրի վերահսկման համար վերոհիշյալ մարզում:

Դպրոցները աշխատեցին միասնական ձևով՝ համաձայն իրենց կազմած գործողության նախագծերի: Գործողության նախագիծը ներառում էր ծրագրի նպատակների իրականացման հետևյալ քայլերը.

- ∞Նախապատրաստական փուլ (հանդիպումներ, քննարկումներ, համապատասխան կազմակերպությունների և պետական մարմինների աջակցություն)
- ∞Բնածին աղետների հատուկ տիպերի ընտրություն՝ հետագա հետազոտման համար
- ∞Նյութերի հավաքագրում և խմբագրում
- ∞Դպրոցի անվտանգության քարտեզի ստեղծում
- ∞Վեբ կայքերի, Power Point ներկայացումների, գրքույկների ստեղծում
- ∞Համապատասխան դպրոցական համայնքին աշխատանքների և արդյունքների ներկայացում

Նախնական հանդիպումներից և քննարկումներից հետո մասնակիցներն օգտագործել էին տարբեր տեղեկատվական աղբյուրներ. դասագրքեր, հանրագիտարաններ և ինտերնետ: Մասնակից խմբերը գծել էին իրենց դպրոցների քարտեզները, որոնք կարելի է օգտագործել աղետների դեպքում, ստեղծել էին ինտերնետային էջեր և բուկլետներ՝ ամփոփելով այն աղետների տիպերը և յուրահասկությունները, որոնք ցնցում են իրենց շրջանները և աշխարհը՝ ընդհանրապես: Աշակերտները փորձեցին համակարգված գործողությունների ուղեցույց տալ յուրաքանչյուր աղետի համար: “Այս ծրագրի արդյունքում աշակերտները ավելի տեղեկացված և ավելի պատրաստված դարձան բնական աղետներին: Հայաստանի նման երկրի համար այս գիտելիքները շատ կարևոր են, քանի որ այստեղ տարերքները հաճախ են տեղի ունենում”, - նշում է Արարատի մարզային ծրագրային կոորդինատոր Ֆենյա Եփրեմյանը:

Վերին Դվինի միջնակարգ դպրոցի աշակերտները, որոնք հիմնականում ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ են, ծրագրի նախապատրաստական փուլում այցելեցին մարզի արտակարգ իրավիճակների վարչություն, ուր վարչության ղեկավարը դասընթացներ անցկացրեց աշակերտների աշխատանքային խմբի համար՝ ներկայացնելով տարերքների հիմնական տիպերը:

Կանաչուտի և Նոր Խարբերդի միջնակարգ դպրոցների աշակերտները նախաձեռնեցին հանդիպումներ Կարմիր Խաչի տեղական ներկայացուցիչների հետ, որոնք այցելեցին դպրոցները, խոսելու աղետների և առաջին օգնություն ցուցաբերելու անհրաժեշտ քայլերի

մասին: Աշակերտների կողմից կատարված մանրակրկիտ հետազոտությունները արտացոլված են բովանդակալից ինտերնետային կայքերում, և նրանց փորձը, դժվարությունները և հաջողությունները ամփոփված են Power Point ներկայացման մեջ, որը ցուցադրվեց դպրոցների համայնքներին:

Եղեգնաձորի թիվ 3 միջնակարգ դպրոցը շատ հետաքրքիր մոտեցում ցուցաբերեց: Հայտարարությունը ստանալուց հետո 8 աշակերտից և երկու ուսուցչից բաղկացած խումբը ստեղծեց կանոնադարգված գործելու աշխատանքային նախագիծ: Եղեգնաձորի Կարմիր Խաչի ներկայացուցչությունը այցելեց դպրոց՝ նրանց համար կազմակերպելով եռօրյա աշխատանքային ներկայացում: Աշխատանքային ներկայացման վերջում Կարմիր Խաչի ներկայացուցիչները մասնակիցներին ու բուկլետներ և պաստառներ նվիրեցին “Պատրաստ պաշտպանելու” և “տարահանումը դպրոցում” թեմաներով:

Հաջորդ փուլը նվիրված էր դպրոցի անվտանգության քարտեզի ստեղծմանը, որը ներկայացվել էր դպրոցի տնօրինությանը՝ գնահատման համար: Աշխատանքային խմբի առաջարկով անվտանգության քարտեզները փակցվել էին համապատասխան հարկերում: Կեղծ ահազանգերի միջոցով մի քանի տարահանումներ են իրականացվել յուրաքանչյուր դպրոցում, համոզվելու համար, որ աշակերտները ծանոթ էին քարտեզներին և գիտեին շենքի անվտանգ մասերը և, թե ինչպես է պետք հեռանալ շենքից անհարժեշտության դեպքում՝ առանց խուճապի:

Այլ համայնքների աշակերտներին հավաքած տեղեկատվությունը հասցնելու համար Հայաստանի NDYS-ի աշխատանքային խմբերը ստեղծեցին ինտերնետային կայք, որը ներառում է 7 PPT շնորհանդես՝ իրենց ուսումնասիրած աղետների մասին: Ինտերնետային ռեսուրսները իրենցից ներկայացնում են բնածին աղետների մասին աննախադեպ հայալեզու կրթական նյութեր: Ինտերնետային կայքը կարելի է գտնել հետևյալ URL հասցեով <http://projects.ascp.am/disasters/hm.htm>, իսկ PPT շնորհանդեսը՝ http://projects.ascp.am/disasters/bnakan_axetner.ppt հասցեով: “Ես հուսով եմ կայքը օգտակար կլինի այն աշակերտներին, որոնք տեղյակ չեն կամ շատ քիչ տեղեկություններ ունեն բնական աղետների մասին: Եվ ցանկացած աղետի դեպքում նրանք կկարողանան պաշտպանել իրենց, և, ինչու ոչ, ցուցաբերել նաև առաջին օգնությունը:”, - նշեց Արարատի մարզային կրթության բաժնի ղեկավար Անահիտ Հակոբյանը:

Ծրագրի ընթացքում Ճապոնիայի կոորդինատորները նախաձեռնեցին մի շարք վիդեոհամաժողովներ, որպեսզի քննարկեն գործողության պլանները (<http://ndys.jearn.jp/vc.html>) և մասնակից աշակերտներին հաղորդակից դարձնեն ծրագրում ներգրավված այլ երկրների աշակերտների հետ՝ կիսելու իրենց հաջողությունները: Հունիսի 1-ին Հայաստանի աշխատանքային խումբը Արտաշատի թիվ 4 միջնակարգ դպրոցում ամփոփեց ծրագիրը վերջնական ներկայացումով: NDYS հայկական թիմի միջոցառումների մանրամասն հաշվետվությունը ներկայացված է Ճապոնիայի հետազոտման և կրթական ցանցի կայքում <http://ndys.jearn.jp/topics.html>

“Տարերքների կանխման և դիմադրելու ամենալավ ձևը դրանց տիպերը, պատճառները և նշանները մանրամասն ուսումնասիրելն է”, - ասում է աշխարհագրության ուսուցչուհի

Թամարա Մանուկյանը: Ծրագիրը լավ հնարավորություն էր՝ բարձրացնելու բնական աղետների մասին տեղեկացվածությունը աշակերտների շրջապատում, որպեսզի նրանք պատրաստված լինեն տարերքներին, ծանոթանան համաշխարհային քաղաքացիության արժեքներին և կայուն ապրելաձևին: